

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԾ ԽԱՐՏԻԱ

800

THE GREAT CHARTER OF LIBERTIES

**Եղևույթ
Մեկնադրյալ
Իմաստավորում**

**Միջազգային զխրաժողով
Ջեկայցների հակիրճանքներ**



**Event
Interpretation
Reasoning**

**International Conference
Book of Abstracts**

**Երևան
2015
Yerevan**



ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՏԻԱ
ARMENIAN ASSOCIATION OF WORLD HISTORY



British Embassy
Yerevan

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԾ ԽԱՐՏԻԱ – 800

ԵՂԵԼՈՒՅԹ
ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ
ԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄ

ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՀԱԿԻՐՃԱՆՔՆԵՐ

12 հոկտեմբերի, 2015
ԵՐԵՎԱՆ

THE GREAT CHARTER OF LIBERTIES – 800

EVENT

INTERPRETATION

REASONING

BOOK OF ABSTRACTS

October 12, 2015
YEREVAN

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԾ ԽԱՐՏԻԱ – 800

(եղելույթ, մեկնություն, իմաստավորում)

1215 թ. Անգլիայի Հովհան արքան ընդունեց իր վասալ-բարոնների պահանջագիրը՝ կանխելով ներհասարակական առճակատումն անգլիական գահի, եկեղեցու և բարոնների միջև: Փոխհամաձայնության արդյունքում մշակվեց Ազատությունների մեծ խարտիան, որը մեծ ազդեցություն է ունեցել հասարակական, քաղաքական, իրավական մտքի ու պրակտիկայի, արդի ժողովրդավարության և մարդու իրավունքների կայացման և ընդհանրապես պատմության հետագա ընթացքի վրա ինչպես միջնադարում, այնպես էլ նոր ժամանակներում: Բավարար է արձանագրել, որ այն հռչակում էր օրենքի գերակայության սկզբունքը հասարակական կյանքի բոլոր ոլորտներում՝ հաստատելով, որ ոչ ոք, այդ թվում արքան, օրենքից բարձր լինել չի կարող: Չնայած հետագա վերախմբագրումներին և մեկնաբանություններին՝ 1215 թ. ստեղծված նախասկզբնական փաստաթուղթը գերազանցեց այն նպատակը, որին միտված էր, և վերածվեց ազատությունների համար պայքարի խորհրդանիշի:

Չեկույցների հակիրճանքներ

MAGNA CARTA AS PEACE TREATY

Nicholas Vincent

Professor of Medieval History

University of East Anglia

Fellow of the British Academy

In this paper I propose briefly to explain the circumstances in which Magna Carta came into existence, as a failed attempt at compromise between King John and his barons. I shall then examine the broader context of such treaties between kings and subjects, both in England and elsewhere in northern Europe, and both before and after 1215. Next, I shall explore various of the successors to Magna Carta in England, most notably the settlements made by Henry III, Edward I and Edward II in direct succession to the events of John's reign. The effect of these successive settlements was to create an assumption that subjects could indeed negotiate with their rulers, and that an entity, sometimes known as 'the community of the realm', possessed rights and liberties with which the sovereign interfered at his peril. From this sprang the later historiographical phenomenon of a succession of such treaties, arranged in canonical order, by which eighteenth and nineteenth-century historians sought to explain the peculiar libertarian destiny of England under what is often described as the 'Whig Interpretation' of History. My paper will be illustrated, using a large number of images (for the lecture, although not for the published format), and will allow me to draw to the audience's attention various of the new discoveries about Magna Carta that have arisen in this, the document's 800th anniversary year.

Keywords: Magna Carta, King John, barons, compromise, treaties between kings and subjects, Henry III, Edward I, Edward II, 'the community of the realm', 'Whig Interpretation' of History.

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԾ ԽԱՐՏԻԱՅԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Գագիկ Հարությունյան

*ԵՂՀ համաշխարհային պատմության ամբիոնի դոցենտ,
պատմական գիտությունների թեկնածու*

1215 թ. հունիսի 15-ին Ազատությունների մեծ խարտիայի (Magna Carta Libertatum) ծնունդը պայմանավորված էր Անգլիայի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի զարգացման առանձնահատկություններով: Հռոմեացիները Բրիտանիան (բացի Կալեդոնիայից՝ Շոտլանդիա) կառավարեցին I դարի կեսից մինչև V դարի սկիզբը, սակայն նրանց ազդեցությունը տարածվեց միայն երկրի կենտրոնում և հարավ-արևելքում, իսկ մնացած մասերում պահպանվեցին հին կելտական կարգերը: Իրավիճակը չփոխեցին գերմանական և նորմանդական նվաճումները, քանզի նրանց հասարակական-քաղաքական կացությունն ըստ էության նման էր կելտականին: Արդյունքում ձևավորվեց քաղաքական այնպիսի համակարգ, երբ թագավորին ընտրում էր ժողովրդական ժողովը, իսկ հետագայում՝ ավագանու խորհուրդը: Թագավորական իշխանությունը սահմանափակում էր տարվա ընթացքում երկուսից չորս անգամ հրավիրվող «Իմաստունների խորհուրդը», որում ընդգրկված էին 30, իսկ X դարում՝ 100 անդամ: Կառավարման այս համակարգն արմատավորվեց Բրիտանիայում ձևավորված անգլոսաքսոնական միջավայրում և վերածվեց քաղաքական ավանդույթի: Իրավիճակը փոխվեց XI դարի երկրորդ կեսին, երբ Անգլիան ենթարկվեց նորմանդական նվաճման և նոր հաստատված արքայական տան ներկայացուցիչները՝ Վիլիելմ I Նվաճողը (1066-1087 թթ.), Հենրի I-ը (1100-1035թթ.) և Հենրի II Պլանտագենետը (1154-1189թթ.) փորձեցին բարեփոխումների ճանապարհով ընդլայնել թագավորական իշխանության իրավունքները:

Կառավարման ավանդական և նորարարական համակարգերի բախման արդյունքում պարտություն կրած Հովհան Անհողինը (1199-1216 թթ.) ստիպված էր ստորագրել «Ազատությունների մեծ խարտիա» փաստաթուղթը, որը սահմանափակում էր թագավորական իշխանության իրավունքները հոգուտ ավանդականության:

Հանգուցաբառեր. Ազատությունների մեծ խարտիա, Բմաստունների խորհուրդ, կառավարման ավանդական համակարգ, ժողովրդական ժողով, ավագանու խորհուրդ:

**ՊԵՏԱԿԱՆԱԿԵՆՏՐՈՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԵՆՏՐՈՆ
ՀԱՐԱՑՈՒՅՑՆԵՐՆ ԸՍՏ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՎ ԿԻԼԻԿՅԱՆ
ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԱՌՆՉԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
(XII-XIII դդ.)**

Սմբատ Հովհաննիսյան

*ԵՂՉ համաշխարհային պատմության ամբիոնի դոցենտ,
պատմական գիտությունների թեկնածու*

Զեկույցի նպատակն է՝ XII դ. վերջի - XIII դ. սկզբի Անգլիայի և Կիլիկյան Հայաստանի օրինակով «պետականակենտրոն» և «եկեղեցակենտրոն» հարացույցները դիտարկել իբրև սոցիալական նորացման երկու տարբեր ընթացքներ: Անգլիայի և Կիլիկիայի օրինակով վեր են հանվում «պետականակենտրոն» և «եկեղեցակենտրոն» հարացույցների տիպաբանական ընդհանրություններն ու տարբերությունները: Իբրև հետազոտական մեկնարկ՝ ընտրել ենք *Երուսաղեմի ասիզները*, քանի որ թե՛ անգլիական *Ազատությունների մեծ խարտիան*, թե՛ *Կիլիկյան իրավական տեքստերը* սերում են դրանից: Ընդ որում, կարևորել ենք դրանց տիպաբանական առնչությունը՝ հետին պլանում թողնելով առնչության առաջնայնության հիմնախնդիրը. այն է՝ մեզ համար կարևոր չէ, թե կոնկրետ ինչ չափով են Երուսաղեմի ասիզները ներազդել մի կողմից Խարտիայի, մյուս կողմից՝ Կիլիկյան Հայաստանում կիրառված իրավական տեքստերի (*Անտիոքի ասիզներ*, Սմբատ Սպարապետի *Ղատաստանագիրքը* և այլն) վրա: Այսպիսով՝ հոդվածում առաջադրել և հիմնավորել ենք այն միտքը, որ Ազատությունների մեծ խարտիան և Կիլիկյան Հայաստանում գործող իրավական ակտերն ու օրենքները, սերելով Երուսաղեմի ասիզներից, զարգացել են երկու տարբեր ուղղություններով՝ եկեղեցակենտրոն և պետականակենտրոն: Վերջիններիս համատեքստում վեր ենք հանել սոցիալական նորացման «ծրագրերի» տիպաբանական ընդհանրություններն ու տարբերությունները:

Հանգուցաբառեր. Երուսաղեմի ասիզներ, Ազատությունների մեծ խարտիա, Անտիոքի ասիզներ, Սմբատ Սպարապետի Դատաստանագիրք, սոցիալական նորացում, եկեղեցակենտրոն և պետականակենտրոն հարացույցներ, տիպաբանական ընդհանրություններ և տարբերություններ:

THE CONSTITUTION FOR THE BROTHERHOOD OF ERZKA OF 1280 AND THE POETRY OF KOSTANDIN ERZKAC'Ī

Theo Maarten van Lint

*Calouste Gulbenkian Professor of Armenian Studies
University of Oxford*

Since the adoption of Christianity as state religion early in the fourth century Armenian statehood has been the exception rather than the rule. One of the consequences this had was that the Armenians were subject to varying juridical systems, imposed by differing authorities. Next to the customary law upheld by the social structure rooted in the *naxarar* system, it was the Armenian Apostolic Church that played a leading role in upholding societal norms.

In this presentation the function of the *Constitution for the Brotherhood of Erzka* written in 1280 by *vardapet* Yovhannēs Erzncac'ī will be addressed in the light of the political and religious situation in the city in the later part of the 13th and the early 14th century, with particular reference to the two main texts preserved in a manuscript of 1336 copied in Tabriz by a member of the Erzka Brotherhood, a certain Amir Polin. These are a sermon of the same Yovhannēs, preceded by the poetry of Kostandin Erzncac'ī (c. 1250-1320), written at least partly for the Brotherhood.

The military, political, and economic interests of the Armenians in the city are addressed in several paragraphs of the Constitution, as are the religious and moral obligations of the members. The latter are central in Yovhannēs's sermon and in Kostandin's poetry. There is however a further component to the reality which prompted the Constitution to be written, and that is the presence *futuwwa* groups in the city, that are seen as strongholds of Islam. All three texts, the Constitution, the sermon, and the poetry played a role in the apology, propagation and implementation of Christianity in the city, each in their own particular

mode: the Constitution setting out the rules and parameters, the sermon as guideline for implementation of them, and the poetry as a means of cementing unity and moral depth through a philosophy of love that found expression among other things in the gatherings of the Brotherhood in the presence of dancing girls and musicians-poet-performers, such as Kostandin Erznkac'i himself. We thus see adhortatory prose, poetry and music underpin and strengthen a legal framework set up for the strengthening of the Armenian community in Erznka in all its vital aspects: military, political, economic, moral, and not least, artistic.

Keywords: Christianity, Armenian statehood, juridical systems, *naxarar* system, Armenian Apostolic Church, *Constitution for the Brotherhood of Erznka*, *vardapet* Yovhannēs Erznkac'i, Armenian community in Erznka.

**ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԾ ԽԱՐՏԻԱՅԻ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԳԼԻԱԿԱՆ
ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ՓՈՒԼՈՒՄ (XVIII դ.)**

Տիգրան Մկրտչյան

*ԵՊՀ համաշխարհային պատմության ամբիոն
ՀՀ ԱԳՆ Մամուլի, տեղեկատվության և հասարակայնության հետ
կապերի վարչության պետ, պատմագետ-քաղաքագետ*

Զեկույցը ներկայացնում է Ազատությունների մեծ խարտիայի վերլուծությունն անգլիական պահպանողական գաղափարախոսության հիմնադիր Էդմունդ Բրքի կողմից: Բրքյան «ազատության» հայեցակարգում Խարտիայի տեքստը վճռորոշ դերակատարություն է ունեցել: Ազատությունների մեծ խարտիային Բրքն անդրադառնում է իր կյանքի և գործունեության ամենատարբեր ժամանակահատվածներում: Նախ՝ նման անդրադարձ է կատարվել 1757 թ. նրա նախաձեռնած «Անգլիայի համառոտ պատմություն» անավարտ աշխատության մեջ, որն ամփոփվել է հենց Խարտիայով: Հետագայում՝ 1760-ական թթ., Անգլիայում ներքաղաքական լարվածության համատեքստում Ամերիկյան հեղափոխության, Հնդկաստանում անգլիական իշխանության չարաշահման և Ֆրանսիական հեղափոխության վերաբերյալ իր մեկնաբանություններում Բրքը հետևողականորեն հղում է կատարել Ազատությունների մեծ խարտիային:

Հետազոտությունը հնարավորություն է ընձեռում եզրահանգելու, որ Բրքը Խարտիան ընկալում էր որպես պահպանողական տեքստ: Այսինքն, XIII դ. սկզբին Հովհան արքայի կողմից տեղի է ունեցել status quo-ի խախտում, և արիստոկրատական վերնախավը նրան ստիպել է *վերականգնել և պահպանել* խախտված իրավունքներն ու ազատությունները: Միաժամանակ, Բրքի ընկալմամբ XVIII դ. 2-րդ կեսին status quo-ի խախտում էր տեղի ունե-

ցել նաև Գևորգ Երրորդ թագավորի կողմից «երկակի կաբինետի» հիմնումով, Ամերիկայի գաղութարարների (որոնք, ի դեպ, նույնպես հղում էին Ազատությունների մեծ խարտիային՝ որպես իրենց ազատությունները երաշխավորող փաստաթղթի) և Հնդկաստանի բնակիչների նկատմամբ: Status quo-ն խախտվել էր նաև Ֆրանսիական հեղափոխության ժամանակաշրջանում, և այդ հեղափոխության տարածման հնարավորության պարագայում status quo-ի խախտման փորձ կարող էր լինել Անգլիայում և ընդհանուր առմամբ Եվրոպայում, ինչը փորձել է կանխել Էդմունդ Բրքքն իր «Մտորումների» տեքստի միջոցով: Բոլոր պարագաներում Բրքքը հղում է Խարտիային, որն ամփոփում էր անգլիական հին ազատությունները և հանդես գալիս դրանց պահպանման կամ վերականգման անհրաժեշտության կոչով:

Ըստ Բրքքի՝ Ազատությունների խարտիան թեև բխում էր անգլիացիների «հին (ancient) ազատություններից», «հին ավանդույթներից», այնուամենայնիվ այդ տեքստը «անգլիական ազատության հիմքերը դրեց»: Այսինքն, այդ փաստաթուղթը մի կողմից պահպանողական էր (բխում էր ժառանգված ավանդույթներից և վերականգնում հին ազատությունները), մյուս կողմից՝ Անգլիայի նոր իրավական պատմության սկիզբն է դնում:

Հանգուցաբառեր. Ազատությունների մեծ խարտիա, հին ազատություններ, ժառանգված իրավունքներ, ավանդույթներ, status quo, պահպանողական:

**ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԾ ԽԱՐՏԻԱՅԻ
ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՄՏՔԻ
ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ**

Գարրիել Բալայան

*Հայաստանի ամերիկյան համալսարան
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ*

Խոսելով համաշխարհային իրավական մտքի վրա Ազատությունների մեծ խարտիայի ազդեցության մասին՝ անհրաժեշտ է ընդգծել, որ դա պատմությունից մեզ հայտնի առաջին դեպքը չէ, երբ միապետը թագավորական հրովարտակով (Ազատությունների խարտիա կամ Գահադրման խարտիա 1100 թ.) խոստանում էր հետևել որոշակի կանոնների՝ հարգելով հոգևորականների, ազնվականների ու անհատների իրավունքները: Վերոնշյալ փաստաթուղթը XIX դ. համարվում էր Խարտիայի նախադեպը: Այս փաստաթուղթն էր, որ Քենթերբերիի արքեպիսկոպոսը ներկայացրեց ազնվականությանը, որը հիմք հանդիսացավ ավելի հստակ փաստաթուղթ մշակելու գաղափարի համար:

Թեև Հովհան արքան ստորագրեց Ազատությունների մեծ խարտիան, սակայն չկարողացավ ընկալել կամ զգալ դրա ազդեցությունն ու նշանակությունը ոչ միայն Անգլիայի, այլև համաշխարհային իրավունքի վրա: Խարտիային սկզբից ևեթ վիճակված էր դժվար ընթացք: Երկու ամսից պակաս ժամանակահատվածում Հռոմի Բնուկենտիոս III պապը այն հռչակեց հակաօրինական՝ պնդելով, թե դա ստորագրվել է ճնշումների ներքո: Այնուհանդերձ Խարտիան արդեն արտագրվել էր և տարածվել ողջ Անգլիայում՝ դառնալով Անգլիայի համաշխարհային արժեքավոր ներդրումներից մեկը:

Խարտիան համընդհանուր ճանաչման արժանանալու համար թերևս պարտական է Էդվարդ Քոկին: Ավելի ուշ, երբ ԱՄՆ հիմնադիր հայրերը փնտրում էին նախադեպային մի փաստաթուղթ, որը կարող էր անգլիական թագից ազատությունների երաշխիքներ

ստանալու համար իրավական հիմք հանդիսանալ, «հայտնաբերեցին» շուրջ 560 տարի առաջ գրված այս փաստաթուղթը:

Խարտիայում ամրագրված հիմնադրույթները և սկզբունքները մինչև այժմ առկա են մի շարք երկրների Սահմանադրություններում և քաղաքացիական իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրական ակտերում: Դրանցից առավել ուշագրավ են սեփականության, հողի սեփականության, ժառանգության, անձի ազատության, դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքների վերաբերյալ դրույթները:

Խարտիայի կիրառելիությունը, օրինակ, Անգլիայի և Ուելսի իրավական համակարգերում միանշանակ չէ: Խնդիրն այն է, որ չկա միասնական մոտեցում դրա իրավակիրառության վերաբերյալ:

Հանգուցաբառեր. Գահադրման խարտիա, Ազատությունների մեծ խարտիայի նախադեպ, Քենթերբերիի արքեպիսկոպոս, Ինկենտիոս III, Էդվարդ Քոկ, ԱՄՆ հիմնադիր հայրեր, իրավակիրառություն:

**ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԾ ԽԱՐՏԻԱՅԻ
ՀԱՄԱԿԵՑԱԿԱՆ ՓՈԽՁԻՁՄԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԸ ԵՎ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ
ԳՐՈԹԻՈՒՍՅԱՆ ԲԱՆԱԶԵՎԸ**

Տիգրան Եփրեմյան

ԵՊՀ համաշխարհային պատմության ամբիոնի ասպիրանտ

1215 թ. Ազատությունների մեծ խարտիայով Անգլիայում սկիզբ առած խորհրդարանական կառավարման համակարգի զարգացումն իր տրամաբանական դրսևորումը գտավ նաև համաեվրոպական մակարդակում Երեսնամյա պատերազմից (1618-1648 թթ.) հետո: 1648 թ. Վեստֆալյան խաղաղությունը եզրափակեց միջնադարյան համընդհանրական-հիերարքիկ աշխարհակարգի փոխակերպումն ինքնիշխան տարածքային պետությունների հորիզոնական կարգի: Եթե Ազատությունների մեծ խարտիան կոչված էր կարգավորելու Անգլիայի միապետի և իր հպատակների միջև հակամարտությունը, ապա Վեստֆալյան պայմանագրերը պետք է կարգավորեին ընդհանուր եվրոպական հակամարտությունը: Ըստ այդմ կարելի է պնդել, որ Վեստֆալյան պայմանագրերը Եվրոպայի համար ունեցան նույն նշանակությունը ինչ որ Ազատությունների մեծ խարտիան Բրիտանիայի համար:

Բացի այդ, միջնադարյան վերազգային համընդհանրականության փլուզման պայմաններում պապականության փոխարեն միջազգային հիմնախնդիրների կարգավորման համար նոր հաստատությունների կարիք առաջացավ: Հուգո Գրոթիուսը (1583-1645 թթ.) առաջարկեց միջազգային իրավունքի նախագիծ, որն արտացոլում էր այդ նոր իրողությունը: Իր «Պատերազմի և խաղաղության իրավունքը» և «Ազատ ծով» աշխատություններում Գրոթիուսը կենտրոնական նշանակություն էր տալիս միջազգային իրողության ընկերային բնույթին և միջազգային հանրության (ազգերի հասարակության) հղացքին: Բացահայտելով հասարակական համակեցական բնույթի անխուսափելիությունը՝ Գրոթիուսը գտնում էր, որ ընկերային կյանքում բռնության կարգավորումը միջազգային կար-

գի ամենահիմնարար խնդիրներից է: Ըստ նրա՝ ազգերի կամ պետությունների հասարակությունում տարաձայնությունների հարթման և վեճերի լուծման կարգավորիչ դերը պատկանում է ազգերի իրավունքին, որի իշխանությունը բխում է բոլոր ազգերի կամ ազգերի գոնե մեծ մասի համաձայնությունից:

Եվրոպական մեծ քաղաքականության համատեքստում հարաբերությունների կարգաբերման համար Գրոթիուսի առաջարկած գլխավոր մեթոդը քրիստոնյա պետությունների ընդհանուր համաժողովների գումարումն էր: Այս համաժողովները համաեվրոպական մակարդակում պետք է կատարեին միապետների կամ ազգերի սենատի դեր՝ կարգաբերելով նրանց շահերի բազմազանությունը և նպաստելով հարատև ու արդար խաղաղությանը: Քրիստոնեական աշխարհի կառավարիչները համաեվրոպական համաժողովներում պետք է հիմնվեին բարի կամքի, փոխզիջման ձգտումի, հավաքական անվտանգության և իրենց ուժերը հավասարակշռելու անհրաժեշտության գիտակցումի վրա:

Ըստ էության, 1648 թ. Վեստֆալի և 1815 թ. Վիեննայի խաղաղության համաժողովները Եվրոպայի համար հանդիսացան միապետների սենատ, որոնց ընդունած նորմերը, համաձայնագրերը, պայմանագրերը և եզրափակիչ ակտերը պետք է ծառայեին իբրև միջազգային հանրային օրենսգիրք և կարգաբերեին եվրոպական միջազգային-ընկերային հարաբերությունները: Չնայած ինքնությունների և շահերի բազմազանությանը՝ Եվրոպայի պետությունները կիսում էին էական ընդհանրությունները շնորհիվ կորպորատիվ ինքնության, ինչն առաջացնում էր «համընդհանրական ազգային շահեր»: Ըստ այդմ, քրիստոնյա պետությունների համաժողովները և՛ իբրև «համընդհանրական պետության» սենատ, և՛ իբրև հաստատություն պետք է ապահովեին ինքնությունների ու շահերի հարաբերականորեն կայուն ամբողջությունը և փոխզիջման հնարավորությունը:

Հանգուցաբառեր. Հուգո Գրոթիուս, Եվրոպա, «ազգերի հասարակություն», միապետների սենատ, բարի կամք, հավաքական անվտանգություն, հավասարակշռություն:

**ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀՈՄՐՈՒԼԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ
ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԾ ԽԱՐՏԻԱՅԻ ՀԱՅԵԼՈՒՄ**

Ջուլիետա Կճանյան

*ԵՊՀ համաշխարհային պատմության ամբիոնի ասպիրանտ,
ՀՊՀԱ քարտուղար*

XIII դ. սկսած Ազատությունների մեծ խարտիան խոշոր ազդեցություն է ունեցել բրիտանական համակեցական կյանքի տարաբնույթ կողմերի վրա՝ իրավական, քաղաքական, տնտեսական, քաղաքակրթական՝ յուրաքանչյուր պատմական դարաշրջանում ներկայացվելով տարբեր կերպ: XVII դ. ծավալվող սահմանադրական պայքարի ընթացքում, որն իր գագաթնակետին հասավ 1688 թ. Փառահեղ հեղափոխության ժամանակ, Խարտիան վերածնունդ ապրեց, բացահայտվեց և իմաստավորվեց շնորհիվ նշանավոր իրավաբան Էդվարդ Քոկի՝ վերածվելով յուրատեսակ վկայակոչման փաստաթղթի: Հետագայում այն տեսականացվեց այնպիսի մտածողների կողմից, ինչպիսիք էին՝ Ջ. Լոկը, Է. Բըրքը, Թ. Փեյնը, Ջ. Բենթեմը և այլք՝ իրավական փաստաթղթից կերպափոխվելով յուրատեսակ ընկերային փոխզիջման և քաղաքական նորացման ծրագրի:

XVII դ. սկսած Խարտիան վերածվելով ազատության, իրավունքի և արդարության խորհրդանիշի՝ տարածվեց կայսրության ամբողջ տարածքով՝ հասարակական տարբեր շերտերի կողմից օգտագործվելով սեփական խնդիրների բարձրաձայնման նպատակով:

XVIII դ. վերջին, Ամերիկյան և Ֆրանսիական հեղափոխություններով պայմանավորված, Բրիտանական գաղութային կայսրության հիմքերը խարխլվել էին. գաղութների անհնազանդության ժամանակաշրջանում գաղութային ազգաբնակչությունն իր պահանջների լեզվի մասին, իրավական աջակցության, ինչպես նաև ոգեշնչման համար սկսեց պարբերաբար մեջբերել Խարտիան: Վերջինիս անմիջական ազդեցությամբ գաղութային Կառավարման համակարգը ենթարկվեց այնպիսի փոփոխությունների,

որոնց աստիճանական զարգացման արդյունքում մշակվեց Բրիտանական կայսրության ինքնանորոգման և կերպափոխման գործընթացում հույժ կարևոր դերակատարություն ունեցող *հոմբուլի* (տեղական ինքնակառավարման) իրավունքը:

Զեկույցը նպատակ ունի Ազատությունների մեծ խարտիան դիտարկելու իբրև բրիտանական հոմբուլի իրավունքի ձևավորմանը նպաստող հիմքային փաստաթուղթ: Մետրոպոլիա-գաղութներ փոխհարաբերությունների զարգացման համատեքստում փորձ է արվում վեր հանելու Խարտիայի և դրանից բխող մի խումբ իրավական փաստաթղթերի, իրադարձությունների և գաղափարների դերն ու նշանակությունը բրիտանական գաղութների ինքնավարության պահանջի ձևավորման, հասունացման և կիրառման գործընթացում:

Հանգուցաբառեր. Ազատությունների մեծ խարտիա, Փառահեղ հեղափոխություն, սոցիալական նորացում, Բրիտանական գաղութային կայսրություն, գաղութային կառավարման համակարգ, հոմբուլի իրավունք:

**ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԾ ԽԱՐՏԻԱՆ ԵՎ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԸ**

**(Սահմանադրականության զարգացումը
Հունաստանում XIX դ. - XX դ. սկիզբ)**

Սամսոն Հովհաննիսյան

ԵՊՀ համաշխարհային պատմության ամբիոնի ասպիրանտ

Ազատությունների մեծ խարտիան բացառիկ կարևորություն ունեցող փաստաթղթերից է, որը խոշոր նշանակություն է ունեցել Միջնադարյան և ապա Նոր դարաշրջանի անգլիական հասարակական համակարգի և իրավաքաղաքական մտքի ու պրակտիկայի վերափոխման ու զարգացման գործում: Փաստաթուղթը նշանակալի է նաև այլ առումով. իր քաղաքակրթական ազդեցության շառավիղով ժամանակի և տարածության այլ չափույթներում ևս առնչվում է այնպիսի հիմնախնդիրների, ինչպիսիք են՝ հասարակական առճակատումը և փոխհամաձայնությունը, հասարակության ու պետության իրավական վերակառուցման գործընթացները:

Խարտիայի այդօրինակ ազդեցությունը բրիտանական քաղաքակրթական տարածության, ինչպես նաև ամերիկյան իրավաքաղաքական համակարգի վրա բավականաչափ ուսումնասիրված է: Ասվածը հույժ գործնական իմաստ է ստանում հատկապես անգլիական խորհրդարանական համակարգի և հարակից պետաիրավական հարաբերությունների զարգացման ընթացքի՝ այլ երկրների կառավարման համակարգերի և համապատասխան հարաբերությունների վրա թողած ազդեցության և դրանց տիպաբանական գուգահեռների ուսումնասիրման համատեքստում:

Մույն զեկուցմամբ փորձ է արված Խարտիայի քաղաքակրթական ազդեցության ծիրում դիտարկել Արդի դարաշրջանում Հունաստանի պետաիրավական համակարգի ու սահմանադրականության զարգացման և շարունակական վերափոխումների գործընթացը: Հիմնախնդրի ուսումնասիրությունը հնարավորու-

թյուն է տալիս այդ համատեքստում առանձնացնել մի քանի փուլ, որոնց բնորոշ հասարակական ու քաղաքական գործընթացների առանցքը մի կողմից պետական կառավարման համակարգում միապետական իշխանության և խորհրդարանի իրավական հարաբերակցության, մյուս կողմից՝ պետության և քաղաքացու հարաբերությունների, մասնավորապես մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների հիմնախնդիրներն էին:

1832 թ. անկախության հռչակումից հետո Հունաստանում հաստատվեց մենիշխանական կառավարման համակարգ: Սակայն 1843 թ. հեղաշրջման արդյունքում ընդունվեց նոր սահմանադրություն՝ իբրև միապետի և խորհրդարանի՝ ի դեմս Ազգի միջև կնքված փոխգիջումային պայմանագիր: Երկրի սահմանադրականության հաջորդ փուլը կապված է 1864 թ. ընդունված նոր փաստաթղթի հետ, որով սահմանադրական միապետական համակարգում արդեն գերակշռող դերակատարում ստացավ խորհրդարանը: Պետական-քաղաքական այդ կարգը հիմնականում պահպանվեց նաև 1911 թ. վերափոխված և բավական ժողովրդավարական նոր սահմանադրությամբ:

Հանգուցաբառեր. Ազատությունների մեծ խարտիա, սահմանադրականություն, Հունաստան, հասարակական փոխհամաձայնություն, պետաիրավական համակարգ:

**ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԾ ԽԱՐՏԻԱՆ ՈՐՊԵՍ
ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆԱԽԱՏԻՊ ԵՎ ԱՂԲՅՈՒՐ**

Ռուբեն Մելիքյան

*ՀՀ արդարադատության ակադեմիայի ռեկտոր,
ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի
ամբիոնի դոցենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու*

Զեկուցման մեջ Ազատությունների մեծ խարտիան դիտարկվում է ժամանակակից իրավական համակարգերում առավել հաճախ կիրառվող ու առավել արագ զարգացող հիմնարար իրավունքներից մեկի՝ արդար դատաքննության իրավունքի կայացման գործում ունեցած դերի ու նշանակության դիտանկյունից: Վերլուծության առաջնային հենքը Խարտիայի 39-րդ հոդվածն է, սակայն անդրադարձ է կատարվում նաև այլ հոդվածների (24-րդ, 40-րդ, 45-րդ հոդվածներ): Արդար դատաքննության ժամանակակից իրավունքը վերլուծվում է թե՛ ազգային-իրավական, թե՛ միջազգային-իրավական հարթություններում՝ ստատիկ (հիմնարար փաստաթղթեր) և դինամիկ (դրանց դատական մեկնաբանություններ) մակարդակներում:

Ազատությունների մեծ խարտիայի դերը, անշուշտ, անհամեմատ մեծ է անգլո-ամերիկյան իրավական ընտանիքում: Ավելին, ընդհանուր իրավունքի հենքի վրա կառուցված համակարգերում Խարտիան ձեռք է բերել բուն իրավունքի խորհրդանիշի գործառույթ: Իրավունքի այդ հուշարձանը որոշակի ներագդեցություն է ունեցել նաև ռոմանոգերմանական իրավական ընտանիքը ներկայացնող երկրների վրա թե՛ անմիջականորեն, թե՛ հատկապես միջնորդավորված ձևով՝ մարդու իրավունքների միջազգային իրավունքի միջոցով: Զեկուցման մեջ փորձ է արվում ներկայացնել նշված առանձնահատկությունները և դրանց կոնկրետ դրսևորումները ժամանակակից իրավունքում:

Հանգուցաբառեր. Արդար դատաքննության իրավունք, ստատիկ (հիմնարար փաստաթղթեր) և դինամիկ (դատական մեկնաբանություն) մակարդակներ, անգլո-ամերիկյան իրավական ընտանիք, ռոմանոգերմանական իրավական ընտանիք, մարդու իրավունքների միջազգային իրավունք:

**ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԾ ԽԱՐՏԻԱՆ ԵՎ ԱՐԴԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԱՐԺԵՔԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Մարիամ Մարգարյան

*ՀՀ պետական կառավարման ակադեմիայի քաղաքական
կառավարման և քաղաքական վերլուծության ամբիոնի վարիչ,
քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

Ազատությունների մեծ խարտիայի 800-ամյա պատմությունն ապացուցում է, որ այն անզու-սաքսոնական քաղաքակրթությանը թույլ տվեց ոչ միայն բնականոն արդիականանալու, այլև ընդարձակելու իր սահմանները հստակեցնելով ազատության, օրենքի գերակայության, դեմոկրատիայի ընկալման ինստիտուցիոնալ հիմքերը:

Այս համատեքստում որոշակիացվեցին ռացիոնալի և իռացիոնալի փոխհարաբերությունները հետագա քաղաքական զարգացումներում: Խարտիայի օգնությամբ մարդիկ ազատությունը և ազատականացումը (freedom և liberty) ընդունեցին որպես հարկադրանքից ձերբազատման հնարավորություն, ինչը թույլ է տալիս ապահովել անվտանգ կեցություն՝ ինքնարտահայտվելով և ինքնադրսևորվելով: Այս առումով փաստաթուղթը շարունակում է կարևոր դեր խաղալ մարդու արժեքային համակարգի արդիականացման գործընթացում:

Պատմության հոլովությունում ձևավորված քաղաքական տրամա-տույթի շրջանակներում (պայմանավորված սոցիալական բարդու-թյուններով) բացահայտվեց Խարտիայի համապարփակ բնույթը, քանի որ նա ստեղծել է ինքնապաշտպանության (self-protection) մեխանիզմներ: Անզու-սաքսոնական քաղաքակրթության համակեցության նորմերը դարձան այլ քաղաքակրթությունների հետ հարաբերությունների զարգացման նորմատիվ ուժ: Ազատությունը, որն ապահովում է օրենքի գերակայությունը, հստակեցնում իշխող-ների իրավունքներն ու պարտականությունները, քաղաքացիներին պաշտպանում չհիմնավորված հարկադրանքից, դարձավ քաղաքակրթության զարգացման արժեքաբանության հիմքը:

Ուստի, հիմք ընդունելով արդարությունը, ազատությունը, ազատականացումը և ուժերի հաշվեկշիռը՝ Խարտիայի նորմատիվ ուժը շարունակում է մնալ արդիական բոլոր նրանց համար, ովքեր պայքարում են անձի ազատության համար՝ որպես քաղաքական զարգացման քաղաքակրթական արժեքաբանություն:

Այս համատեքստում Խարտիան կարևոր դերակատարում ունի համընդհանրացման գործընթացներում և 21-րդ դարում տեղեկատվական հասարակության զարգացման հետևանքով առաջացած մարտահրավերներին պատասխանելու գործում:

Զանգվածային հաղորդակցման արդի տեխնոլոգիաներն ընդարձակել են քաղաքական ճանաչողության սահմանները: Միաժամանակ, այդ տեխնոլոգիաները, մեծացնելով մարզինալ ազատության հնարավորությունները, նեղացրել են ազատության սիմվոլիկ և քաղաքակրթական արժեքաբանության դաշտը:

Այսօր «գունավոր հեղափոխությունների» հետևանքներից ակնհայտ է, որ մարզինալ ազատությունն ազդում է քաղաքակրթությունների արժեքաբանության սենսորային ընկալումների վրա: Այս ամենը ստեղծել է բարդ աններդաշնակ միջավայր՝ մի կողմից իզոլմներ առաջացնելով ազատության, անվտանգության և ժողովրդավարացման գործընթացների միջև, մյուս կողմից խորացնելով քաղաքական զարգացման ճգնաժամերը (բաշխման, շարժունակության, մասնակցության, ինքնության և լեգիտիմության) զարգացող երկրներում:

Այս առումով անհրաժեշտ է կարևորել մարդու էկոլոգիան և անվտանգության ապահովումը: Որպես “freedom from want” և “freedom from fear”՝ մարդու անվտանգությունը լայն և նեղ իմաստով թույլ կտա հաղթահարել քաղաքական զարգացման ճգնաժամերը՝ ապահովելով քաղաքական կայունություն և կայուն զարգացում:

Հանգուցաբաներ. քաղաքական զարգացման արժեքաբանություն, քաղաքական տրամասույթ, նորմատիվ ուժ, ազատություն, մարդու էկոլոգիա, մարդու անվտանգություն:

**ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԾ ԽԱՐՏԻԱՆ
ՊԱՏՄԱԿԱՆ ԱՐՔԵՏԻՊԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐՈՒՄ**

Ալբերտ Ա. Ստեփանյան

*ԵՊՀ համաշխարհային պատմության ամբիոնի վարիչ,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՊՀԱ նախագահ*

Լիլիթ Ռ. Մինասյան

*ԵՊՀ համաշխարհային պատմության ամբիոնի դոցենտ,
պատմական գիտությունների թեկնածու*

Զեկույցի հեղինակները մտադիր են հիմնախնդիրը դիտարկել արդիականության հեռանկարից: Լինելով տարբեր սերունդների մտավորականներ՝ նրանք համաշխարհային պատմության, ի մասնավորի՝ հռոմեականության և նորհռոմեականության կրողներ են: Ընդամին, պատմությունը նրանց համար արքետիպային կառույցների խաղարկման միջավայր է: Եվ կարևոր չեն արքետիպերի պատճառահետևանքային առնչությունները, այլ՝ նրանց իմացաբանական համադրելիությունն արդի մտակեցվածքի տիրույթում:

Տվյալ պարագայում քննության են ենթարկվել երեք արքետիպային կառույցներ՝ ա. Հռոմեական պրինցիպատի արքետիպը, բ. Ազատությունների մեծ խարտիայի արքետիպը, գ. Արթուր արքայի կլոր սեղանի արքետիպը:

ա. Հանրապետական միապետությունը կամ միապետական հանրապետությունը արդյունք էր այն համակարգային ճգնաժամի, որն ապրում էր հանրապետական Հռոմը շուրջ հարյուր տարի: Միայն Ք. Ա. 27 թվականին կյանքի կոչվեց պրինցիպատը, որի հիմնադիրը՝ Օգոստոսը, այն ձևակերպում էր իբրև «հանրապետության վերականգնում»՝ խաղաղության, կարգի, ներհասարակական համաձայնության երաշխավորությամբ: Օգոստոսյան քարոզչությունն ամենուրեք ստվերում էր նրա իշխանության իրավական-հրամայական կողմը՝ շեշտադրելով դրա բարոյական բովանդակությունը՝ հեղինակությունը և արդարությունը, որոնք բարձր էին դասվում օրենքներից: Իշխանական այս հարացույցն Օգոստոսի

բնութագրամաբ՝ ծնունդ էր իր բացարձակ իշխանության գիտակցական սահմանափակման. «[...]համընդհանուր համաձայնությամբ դառնալով գերագույն տիրակալ՝ հանրապետությունն իմ իշխանությունից հանձնեցի սենատին և ժողովրդին»:

բ. Ազատությունների մեծ խարտիան ստորագրվեց Հովհան արքայի (1199-1216 թթ.) 16-ամյա կամայականություններով, բռնաճնշումներով, կորզումներով լի կառավարման դեմ բռնկված բարոնների ապստամբության և քաղաքացիական պատերազմի սպառնալիքի պայմաններում: Շրջապատվելով Ռանիմիդում՝ ապստամբած բարոնների զորքերի և հոգևորականների կողմից՝ արքան հարկադրված համաձայնեց ստորագրել նրանց ներկայացրած փաստաթուղթը: 63 հոդվածների մեծ մասը կոչված էր սահմանափակելու արքայի միահեծանությունը: Ավելին, 61-րդ հոդվածը կոնկրետ իրավասություններ էր տրամադրում 25 բարոններից բաղկացած ընտրովի հանձնախմբին արքայի կամ նրա պաշտոնյաների կողմից սույն դաշնագրի խախտման դեպքում՝ ճանաչելով բռնի ճանապարհով խախտված կարգի վերականգնման նրանց իրավունքը: Այսպիսով, նրանք իրավական հիմք էին ձեռք բերում «վատ արքայի» կործանարար գործունեությունը եթե ոչ չեզոքացնելու, ապա նվազագույնի հասցնելու համար: Այլ կերպ ասած՝ օրենքը վեր էր ամեն ինչից, և բոլորը, այդ թվում արքան, պարտավոր էին ենթարկվել նրան և հավասար էին նրա առջև: Բարոյական հրամայականն ըստ էության ստվերվում էր:

գ. Արթուր արքայի կլոր սեղանի արքետիպը բրիտանական ինքնագիտակցության ամենաներգործուն արքետիպերից է: Իզուր չէ, որ Թյուդորներն իրենց կառավարումը լեգիտիմացնելու համար իրենց ծագումը կապում էին Արթուրի հետ: Նման կարգավիճակը հատկապես արժևորվել է XVIII-XIX դարերից սկսած՝ վերածվելով սոցիալական ուտոպիայի: Ընդամին, Կլոր սեղանն ընկալվում էր իբրև վաղ արդյունաբերական դարաշրջանի հիերարքիկ սոցիալական միջավայրի հաղթահարման մտահոգևոր ճիգ: Մինչդեռ արդի հետազոտական հայացքի ներքո՝ այն միջակա դիրք է զբաղեցնում վերոնշյալ երկու արքետիպերի միջև. իր արմատներով գնալով դեպի կելտական անցյալ՝ այն հավասարակշռում է օրենքը և բարո-

յականությունը, արդարությունը և հրամայականը, հավասարությունը և արժեքային աստիճանակարգությունը: Կլոր սեղանը սոցիալական երկխոսության և փոխզիջումի խորհրդանիշ է: Ուստի անժխտելի է նրա ազդեցությունն արդի գիտական և գեղագիտական մտքի վրա:

Վերոքննյալ երեք արքետիպերի կապը, կրկնենք մեկ անգամ ևս, իմաստաբանական է, այսինքն՝ իրական է լոկ այն պարագայում, երբ առկա է համապատասխան «ինտելեկտուալ աչքը»:

Հանգուցաբառեր. Ազատությունների մեծ խարտիա, պրինցիպատ, սոցիալական երկխոսություն և փոխզիջում, բարոյական հարկադրանք, օրենք, Արթուր արքայի կլոր սեղան, սոցիալական ուտոպիա:

Մասնակիցներ

NICHOLAS VINCENT

Professor of Medieval History
University of East Anglia
Fellow of the British Academy
Email: n.vincent@uea.ac.uk

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԵՊՀ համաշխարհային պատմության ամբիոնի դոցենտ
պատմական գիտությունների թեկնածու
Email: worldhistory@ysu.am

ՍՍԲԱՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԵՊՀ համաշխարհային պատմության ամբիոնի դոցենտ
պատմական գիտությունների թեկնածու
Email: thondrak@yahoo.com

THEO MAARTEN VAN LINT

Calouste Gulbenkian Professor of Armenian Studies
University of Oxford
Email: theo.vanlint@orinst.ox.ac.uk

ՏԻԳՐԱՆ ԵՓՐԵՍՅԱՆ

ԵՊՀ համաշխարհային պատմության ամբիոնի ասպիրանտ
Email: yeptigran@gmail.com

ՏԻԳՐԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ԵՊՀ համաշխարհային պատմության ամբիոն
ՀՀ ԱԳՆ Մամուլի, տեղեկատվության և
հասարակայնության հետ կապի վարչության պետ
պատմագետ-քաղաքագետ
Email: tigranes.mkrtychyan@gmail.com

ՋՈՒԼԻԵՏԱ ԿՃԱՆՅԱՆ

ԵՊՀ համաշխարհային պատմության ամբիոնի ասպիրանտ
ՀՊՀԱ քարտուղար
Email: julieta.kk@gmail.com

ՄԱՄՍՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԵՊՀ համաշխարհային պատմության ամբիոնի ասպիրանտ
Email: samson.armenie@gmail.com

ԳԱԲՐԻԵԼ ԲԱԼԱՅԱՆ

Հայաստանի ամերիկյան համալսարան
Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Email: g.balayan@fulbrightmail.org

ՌՈՒԲԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ

ՀՀ արդարադատության ակադեմիայի ռեկտոր,
ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի
դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու
Email: rubenmelikian@yahoo.com

ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի քաղաքական
կառավարման և քաղաքական վերլուծության ամբիոնի վարիչ
քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Email: margaryan-mariam@inbox.ru

ԱԼԲԵՐՏ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԵՊՀ համաշխարհային պատմության ամբիոնի վարիչ
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ՀՊՀԱ նախագահ
Email: bertstepanyan48@gmail.com

ԼԻԼԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

ԵՊՀ համաշխարհային պատմության ամբիոնի դոցենտ,
պատմական գիտությունների թեկնածու
ՀՊՀԱ փոխնախագահ
Email: lilitminasyan@ysu.am

